Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ *18 նոյեմբերի 2011 թ.* «ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 336 ՈՐՈՇՈՒՄԻՑ

Նկատի ունենալով, որ Իջևան քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմում թափուր են տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժնի պետի /ծածկագիր 2.1-2/, տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-8/, աշխատակազմի գլխավոր մասնագետների /ծածկագրեր 2.3-5 և 2.3-7/, ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-9/, աշխատակազմի առաջատար մասնագետի /3.1-5/, տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-8/, տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժնի 1-ին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-8/, աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-3/, աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետների / ծածկագրեր 3.3-4 և 3.3-5/ պաշտոնները և ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին'' օրենքի 28-րդ հոդվածով, ՀՀ ,,Համայնքային ծառայության մասին'' օրենքի 14-րդ հոդվածով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Իջևան համայնքի ղեկավարի տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժնի պետի /ծածկագիր 2.1-2/, տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-8/, աշխատակազմի գլխավոր մասնագետների /ծածկագրեր 2.3-5 և 2.3-7/, ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-9/, աշխատակազմի առաջատար մասնագետի /3.1-5/, տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-8/, տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժնի 1-ին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-8/, աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-3/, աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետների / ծածկագրեր 3.3-4 և 3.3-5/ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ՝ ս/թ դեկտեմբերի 19-ին, ժամը 11:00-ին, Իջևանի քաղաքապետարանում:

2. Հանձնարարել համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովին՝ մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություն ,,Հայաստանի Հանրապետություն'' օրաթերթում և նախապատրաստական աշխատանք տանել մրցութային հանձնաժողովի աշխատակարգին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ